

ԻԲԻԿՈՍԻ ԿՌՈՒՆԿՆԵՐԸ

(Die Kraniche des Ibykus)

ՇԻՆԼԵՐԻ

Դէպի Իսթմեան սուրբ հանդէսը¹⁾ մեծհամբաւ,
Ուր ժողովուում էին անթիւ հէլլէններ՝
Տեսնելու մարտն երգիչների և արշաւ,
Ընթանում էր Իբիկոսը²⁾ երկնասէր:
Ապովոնը պարգևատրած էր նրան
Անուշ բերան, քաղցրիկ երգի մի քանքար,
Եւ ձեռն առած փոքրիկ, թեթեւ գաւազան՝
Ոգևորուած գնում էր նա ճանապարհ:

Ահա արդէն հեռաստանում երևաց
Սարալանջին Ակրոկորինթ³⁾ վերամբարձ,
Եւ սրբատարոփ ու երկիւղած նա մըտաւ
Պոսիդոնի մայրի-անտառ խըտաթաւ:
Ամեն տեղ լուռ, ոչ մի շրշուկ, ոչ մի ձայն.
Կըռուկները երաձնեղն են միայն
Շարան-շարան, շրդթայի պէս միացած,
Զըւում հեռու՝ դէպի գարուն նորաբաց:

«Ո՛վ մըտերիմ դուք երաձնեղ օդապար,
Որ ուղեկից էիք ինձ հետ միասին,
Էրնէ՛կ բարի նըշան լինէք ինձ համար.
Իմ բաժինը յար և նըման է ձերին.

1) Հին յունաց համազգային տօնախմբութիւն, որ կատարւում էր Կորինթոսի մօտ:

2) Յոյն բանաստեղծ:

3) Կորինթոսի միջնաբերդը:

Ես էլ ձեզ պէս՝ ելած հեռու վայրերից՝
 Մի հիւրընկալ ապաստան եմ որոնում,
 Թող մեզ պաշտպան լինի Զևար¹⁾՝ երկընթից,
 Որ պանդըխտին աղէտից զերծ է պահում:»

Եւ նա ուրախ ուղղում է իր քայլերը
 Առաջ, դէպի անտառային²⁾ խորքերը:
 Յանկարծ ահա ճամբին երկու մարդասպան
 Մի նեղ շուղում կանգնում են դէմ-յանդիման:
 Նա պատրաստ էր ընդդիմանալ թըշնամուն,
 Բայց թուլացաւ խեղճի ձեռքը և ընկաւ,
 Վարժ՝ քընարի միայն լարեր լարելուն՝
 Իր աղեղը լարել անգոր դըտնուեցաւ:

Նա կոչում է աստուածներին և մարդկանց,—
 Աղաչանքին չը կայ լըսող և մի անձ.
 Յուսակըտուր կանչում է նա, հառաչում,—
 Նըրա ձայնը արձագանքըն է կրկնում:
 «Ուրեմն այստեղ լըքուած պիտի ես մեռնեմ,
 Հայրենիքից հեռու, օտար աշխարհում,
 Եւ չար ձեռքով անթաղ³⁾՝ պիտի կորընչեմ՝
 Վըրէժ չառած և քէն ու ոխ իմ սըրտում:»

Եւ նա ընկաւ՝ մի ծանրը վէրք իր կըրծքում:
 Յանկարծ աղմուկ կըռուկնների թևերից.
 Նա լըսում է— էլ աչքերը չեն տեսնում—
 Օգը դողաց սարսափելի կըռնչից:
 «Ո՛վ կըռուկններ, որ թըռչում էք երկնապար,
 Երբ ոչ մի ձայն էլ չը յիշէ իմ անուն,

1) Զևար նաև հիւրասիրութեան Աստուած էր և պանդըխտների պաշտպան:

2) Անտառը նուիրում էր Պոսէյդոն աստծուն:

3) Անթաղ մնալը յոյների համար ամենամեծ դժբախտութիւն էր:

Շղէք դուք իմ մահուան վրկայ անաչառ:»
Ասաց, մարեց աչքի լոյսը—մըտաւ քուն:

Մերկացըրած մարմինը շուտ գըտնուեց.
Թէև անչափ յօշոտուած էր վերքերով,
Բայց անյապաղ երգչին դէմքից ճանաչեց
Կորինթացի բարեկամը՝ տեսնելով:
«Այսպէս պիտի տեսնէի քեզ, սիրելի!
Իմ իղձըս էր—սոճեայ¹⁾ շրքեղ պըսակով
Ջարդարել քո վեհ ճակատը պանծալի՝
Լուսաւորուած փառքի պայծառ շողերով:»

Գոյժըն հասաւ ահա բոլոր հիւրերին՝
Պոսիդոնի տօնին ի մի ժողովուած.
Ողջ Յունաստան ողբաց ողբով դառնազին,
Եւ ամեն ոք նոյն վըշտով էր համակուած:
Եւ մոլեգնած ամբոխն ահա խրոնրեց
Պրիտանների²⁾ առաջ, վըրէժ է կանչում,
«Վըրէժ երգչի հոգու համար,»—նա գոչեց.
«Ջարագործի արիւնըն ենք պահանջում:»

Բայց ուր փընտրել նըրա հետքը և ինչպէս
Ովկէանոսում ալեկոծուած բազմութեան՝
Ամեն կողմից թափուած շրքեղ այս հանդէս՝
Քըտնել նըրա սև երեսը մոլեկան:
Աւազակ էր, որ շընչում է անարգել,
Թէ թըշնամի՝ դըրդուած մի կոյր նախանձից—
Միայն Հեկոսն³⁾ այդ կարող է վըկայել,
Որ աշխարհը լուսաւորում է բարձրից:

Գուցէ նոյն իսկ այս բոպէին համարձակ
Շըրջում է յոյն բազմութեան մէջ անվեհեր,

¹⁾ Յաղթող երգչին պարգևում էին սոճեայ պսակ:

²⁾ Պրիտաններ—դատաւորներ: ³⁾ Այսինքն՝ արեգակը:

Եւ, մինչ նըրան փընտրում է վրէժ դըժընդակ,
 Նա քաղում է իր յանցանքի պըտուղներ,
 Կամ տաճարի գույէ շեմքում նա կանգնած՝
 Աստուածներին պիղծ բերանով անարգում
 Եւ ամբոխի ալիքի հետ խառնըւած՝
 Խըրոխտալով դէպի Թատրոն²) է դիմում,

Ուր շարեշար իրար վրայ կուտակուած՝
 (Նեցուկները հազիւ հազ են դիմանում)
 Հեռու և մօտ երկիրներից ժողովուած
 Յոյն ազգերը խընըւում են, ըսպասում.
 Որպէս ծովի ալիքներ, խուլ աղմուկով
 Վըխտում էին, և շարքերը անհամար
 Խըտանալով և անընդհատ աճելով
 Բարձրանում մինչ երկընքի ջինջ կամար:

Ո՞վ կը համրէ այս ցեղերը բազմազան՝
 Այստեղ սիրով հիւրընկալուած միաբան.
 Ամեն տեղից եկել են՝ ճոխ Աթէնքից,
 Աւիզայից և Փոկիսից, Սպարտայից,
 Եւ ասիերիցն Ասիայի հեռաւոր,
 Եւ էգէյեան կըղզիներից փառաւոր
 Եւ լըսում են ուշիուշով ու լըփն
 Ահեղ պարի¹) սարսափելի մեղեդին:

Խըստահայեաց, լուրջ, վաղեմի կանոնով
 Դանդաղաքայլ և չափածոյ ճեմելով
 Բեմի խորքից ելնում է նա և անցնում
 Եւ Թատրոնի շուրջ մի պըտոյտ կատարում:
 Դա հողեղէն կանանց քայլ չէ բընաւին,
 Մահկանացու գերդաստանումչեն ծընուած.
 Մարմինները հըսկայ հասակ ունէին,

1) Յունաց Թատրոններում 10-20 հազար և ավելի ժողովուրդ կարող էր տեղաւորուել:

Որ մարդկային հասակից էր գերազանց:

Մինչև ազդերը ծածկուած են սև քօղերով,
 Եւ շարժում են իրանց վրտիտ ձեռքերում
 Կիրոնները՝ դողդող, աղօտ բոցերով:

Ձը կայ արիւն չոր ու ցամաք այտերում,
 Եւ գլխներին մազեր չը կան փարելի,
 Ճակատներին չեն ծածանւում գանգուրներ,
 Այլ միմիայն սև օձեր են ահուելի՝
 Հանած իրանց չար, թունաւոր լեզուներ:

Շըրջան կապած՝ որոտաձայն երգեցին.
 Թընդաց թատրոն այն համերգիցն ուժգին,
 Որ թափանցում է խոր սիրտը և խոցում,
 Ոճրագործի շուրջ հանգոյցներ ոլորում:
 Որոտում է էրինների երգն ահեղ,
 Թըռցնում է միտք, աչքի լոյսը խաւարում,
 Որոտում է, չորացնում է ուղեղ,
 Եւ քնարը համրանում է և լըռում:

«Երանի՛ նրան, ով ազատ է մեղքերից
 Եւ մանկական հոգի ունի մի ամբիծ—
 Մենք նըրանից վըրէժ չունինք տակաւին.
 Թո՛ղ նա աղատ գընայ կեանքի իր ուղին:
 Բայց վայ նըրան, ով որ գործեց վայրաբար
 Ծանըր յանցանք ըսպանութեան զազրելի.
 Նըրան պիտի մենք հալածենք անդադար,
 Մենք, ծընունդներս դըժոխային խաւարի:

Եւ կարծում է, թէ կ'ազատուի փախուստով.
 Բայց մենք ունինք զօրեղ թևեր, կը հասնենք

¹⁾ Պարը յունաց թատրոնական ներկայացումների անբաժան մասն էր: Ներկայ դէպքում պարը կազմուած է վըրէժ-խնդրութեան աստուածուհիներից (էրիններին):

Եւ ցանցի մէջ ոտքերը պինդ փաթթելով՝
 Բոլոր ուժով նըրան վայր կը տապալենք.
 Նըրան անվերջ պիտի քըշենք մենք այսպէս.
 Ոչ մի զըղշում նըրա հետ չի հաշտեցնի.
 Պիտ հալածենք նըրան մինչև Այիդէս¹⁾,
 Այնտեղ էլ մենք նըրան ազատ չենք թողնի:»

Լըռեց պարը, ահեղ երգը դադարեց.
 Եւ թատրոնում անդորրութիւն տարածուեց,
 Գերեզմանի, մահուան ճընշող լըռութիւն,—
 Կարծես ներկայ լինէր աստծոյ դոյութիւն:
 Հանդիսօրէն և վաղեմի կանոնով
 Թատրոնի շուրջ մի պտոյտ է կատարում
 Եւ համրապալ ու հափածոյ ճեմելով
 Անհետանում դարձեալ բեմի խորքերում:

Ճըշմարտի և պատրանքի մէջ երերուն՝
 Ամեն մի սիրտ կասկածում է և դողում
 Ու ենթարկւում այն սոսկալի զօրութեան,
 Որ դատելով, իբրև արթուն պահապան,
 Անմեկնելի, անհասնելի, անքըննին,
 Մեր վիճակի սև կըծիկըն է հիւսում,
 Արեգական լոյսից ծածկուած բընաւին,
 Տեսանելի միայն սըրտի խորքերում:

Յանկարծ ահա աստիճանից լըսում է,
 Թէ ինչպէս մէկ հանդիսական գոչում է.
 «Նայիր, նայիր, Տիմոթէոս, վերևում
 Իբիկոսի կըռունկներն են սըլանում:»
 Երկնականամարն յանկարծ մըթնեց, սևացաւ.
 Եւ ամբոխը նայեց վերև ու տեսաւ—
 Երկընքովը կըռունկները երամով
 Շարան շարան չըլում էին կըռփնչով:

¹⁾ Դժոխք:

«Ի՞նչ. Իբիկոս» — Եւ թանկագին այս անուն
 Ամեն մէկի սրբաին նոր վիշտ է բերում:
 Ինչպէս ծովի մըրըրկայոյզ ալիքներ,
 Բերնից բերան անցնում էին այս խօսքեր.
 «Իբիկոսը, որին ամենքն են ողբում.
 Որին սպանեց չարագործը անտառում.
 Ի՞նչ իմաստ կայ այս խօսքի մէջ. ի՞նչ նըշան
 Ունի չըւող կըռուկների այս երամ»

Եւ դեռ կըրկնում երեքկնում են հարցերը,
 Եւ կայծակի սսես փայլից սրբերը
 Նախագագին. «Այստեղ է նա, մարդասպան!
 Էրինների անա արդար դատաստան»
 Խոնարհ երգչի սուրբ վըրէժը լուծուեցաւ.
 Չարագործը մատնեց իրան շրփոթուած.
 «Բըռնէ՛լ նըրան, ումնից խօսքը դուրս թըռնաւ,
 Եւ այն մէկին, ում այն խօսքն էր ասուած»

Բայց ով այն խօսքն յանկարծ թըռցրեց բերանից,
 Կ'ուզէր կըրծքում գաղտնի պահել ամենքից!
 Սակայն իզուր. դէմքով գունատ, այլայլուած
 Իսկոյն մատնեց իր ոճիրը կատարած:
 Պրիտանների առաջ տարան երկուսին,
 Բեմը դարձաւ մի իսկական դատարան.
 Չարագործը խոստովանուեց ամենքին,
 Գործակցի հետ ըմպեց բաժակ դառնութեան:

Թարգմ. Լեւոն Մաճուէ լեւանի: